





~~Հ 164~~

~~Հ 165~~

ՑԱԿԻՆ Լ. ԳԵՂԵՐ

2 000

ՀԱՅՐԵՆԱՍԵՐ

ՏԻԿԻՆ



ԹԻՖԼԻՍ

1898

Հազ  
280

165

Տիկին Ա. ԳԱՆԻՔԻ

161

ԱՅ  
ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՏԻԿԻՆ



1810 | 40436



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Ա. Գ. Ռոտինյանցի  
Տիգրաֆիա Մ. Դ. Ռոտինյանցի, Տօլ. պր., ձ. № 41.  
1897

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅԻ ԽՈՍՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Дозволено цензурою. Тифлисъ, 30-го Июля 1897 г.

280-2003

28-279

297oo-ч. 6.

(3552-8)

Հայաստանի պետքածար մասնակի է ոչ  
առաջ գեցաց ու համարած մեջ պահել հայոց  
հայութեան կամ հայութեան պահպանի  
ըստ մեջ համարած մեջ ու դաշտ և պատ  
ճակար բարով ընթառ ու ողանքի բարութ  
առաջ պարագան քայլանավա ու որու մաս  
**I.**

Տիկին ֆերարի անունը Ալզասի ժամանակա-  
գրութեան մէջ լիշուելու արժանի է:

Ալզասցու գծագրութիւնը — քառանկիւնի դէմք,  
ծանրահայեաց, կապոյտ, գրաւիչ աչքեր. գլխի  
շարժուածքի մէջ մի տեսակ վստահութիւն, ազ-  
նութիւն կայ, որ զարմանալի է տեսնել ուամիկ  
կնոջ մէջ, որի համեստ կեանքը դաշտերումն է  
անցել:

Սակայն զարմանքը անհետանում է, երբ ծա-  
նօթանում էք այդ կնոջ անցեալի հետ:

Երեսուն տարեկան այրի էր նա. ունէր չորս  
մանկահասակ երեխայ — մի աղջիկ և երեք տղայ:  
Նրա ողջ հարստութիւնը Վօգեզ լեռների միջա-  
վայրում գտնուող փոքրիկ դաստակերտն էր, ուր  
նա սկսեց մեծ եռանդով աշխատել իր ընտանիքը  
կերակրելու և իր զաւակները կրթելու համար:

Նա անձամբ սկսեց իր հողի մշակութիւնը:  
Ն այն անմշակ, զառիվայր և խորտուերթ  
ձորը մի ուրախ, պտղաբեր հովիտ դարձեց: Մա-  
շառուտ անտառների տեղ աճեցին բեղմնաւոր գայ-

լուկ կոչուած բոյսեր: Այն տեղերում, ուր առաջ վայրի թփեր էին բուսնում, նա ցանեց վուշ և ծխախոտ: Այն տեղերում, ուր առաջ մորին, կոծոխուրը և վայրի թութը միախառնում էին իրանց անպտուղ ոստիկները, նա տնկեց խաղողի օրթ: Եւ այն հողը, որ աշխատանք և անդադար հոգացողութիւն է պահանջում, բայց որը երեք ապերախտ չէ, նրան առատապէս վարձագրեց: Անձնուէր աշխատանքով և խնալողութեամբ արիաջան մայրը հասաւ իր նպատակին:

Նա իլ երեք որդիկերանց ալնպէս էր դաստիարակել, որ նրանք հայրենիքի օգուտը ամեն բանից գերադասում էին:

Երկու մեծ որդիքը, որոնք ուսում էին առել Սեն-Միր դպրոցի մէջ, աստիճանաւորներ էին, — Ստեփաննոսը հեծելազօրքի հարիւրապետ էր, իսկ Կլոդը հետեւակների լէտինանտ. ամենից փոքրը՝ Ֆրանցը իր ուսումն աւարտել էր երկրագործական դպրոցում. նա ապրում էր մօր հետ և օգնում էր նրան հողը մշակելու:

Ինչ վերաբերում է նրա մանկահասակ աղջիկ՝ գեղեցիկ Քրիստինային, նա օգնում էր մօրը տնալին գործերում: Նա զուարթացնում էր տունը իր ուրախ երգերով: Նա հաւանոցի թագուհին էր, ծագկանոցի ամենագեղեցիկ ծաղկը. նրա շնորհով նրանց դաստակերտը ուրախալի տեսարան էր ներկայացնում:

Այդ չորս զաւակները համարեա պաշտում

էին իրանց մօրը և նրա անձնուէր աշխատութեան և սիրով փոխարէն մատուցանում էին փոխադարձ սէր և յարգանք: Մէկ խօսքով, այս այն նահապետական ընտանիքներից մինն էր, որի նմանը միայն գեղեցիկ Ալգասում կարելի էր գտնել:

Տիկին ժերարին իր ազնիւ հոգով ոչ միայն ալզասուհի կարելի էր համարել, այլև տնվեհեր հալրենասէր: Վաղուց նա տուում էր պրուսացիներին, ինչպէս ինքն էր տուում, նրանց չարութեան, կեղծաւոր խորամանկութեան և մանաւանդ նրանց յափշտակասիրութեան համար: Սակայն այդ ոխը չէր տարածւում բոլոր գերմանացիների վրայ:

Քրիստինան ջերմ սրտով սիրում էր մի երետասարդ Վիւրտենբերգու, որ մերձակայ գործարանի պաշտօնեայ էր, և որը նրա հետ կիրակի օրերը երաժշտութեամբ էր պարապում: Տիկին ժերարը հաւանութիւն էր տալիս այդ սիրոյն:

Երկու սիրահարները նոր էին նշանուել, երբ յանկարծ յայտնուեցաւ, թէ զարհուրելի պատերազմ է լինելու:

Կարլ Ֆօրլիշը պիտի միանար Վիւրտենբերգեան գորքի հետ: Սրտառուչ էր նրանց մնաս բարեւ: Սիրող աղջկանը թւում էր, թէ Կարլը գնալով տանում է իր հետ նրա սիրտը:

Ո՞վ կարող էր գուշակել սկսուող պատերտզմի հետեւանքները:

Տիկին ժերարը հաւատացած էր, որ Փրան-

սիան լաղթող կը հանդիսանալ, այդ պատճառով  
նա չէր խանգարում խեղճ Քրիստինալին հաստատ  
հաւատարմութիւն պահպանել դէպի իր փեսա-  
ցուն:

Թնդանօթների առաջին հարուածները որո-  
տացին. Վայսենբերգի հարուածը Ալզասին թըմ-  
րութեան մէջ գցեց:

Ուրեմն Փրանսիացիք կարող են լաղթուած  
լինել:

Այդ բօթաբեր լուրը զարհուրեցը արիա-  
սիրտ կնոջը, որովհետև նորա երկու մեծ որդիքը  
Մակ-Մահօնի զօրաբաժինների մէջն էին և շա-  
րունակում էին պատերազմը:

Օգոստոսի 7-ն էր:

Առաւօտուանից սկսած, թնդանօթը հեռա-  
ռոր փոթորկի նման անդադար որոտում էր:

Եւ ում չէ յայտնի, որ թնդանօթի իւրաքան-  
չիւր հարուածը անթիւ զոհեր է տանում: Գուցէ  
վալը ընկնողը, ջարդուողը, սպանուողը մեր սրտի  
սիրածն է. նա խոնաւ հողի վրայ ընկած է, վի-  
րաւորուած, պատառուած, մահուան տանջանք-  
ների մէջ, առանց մնաս բարեկի, առանց մի սըր-  
տակից բարեկամի, որ կարողանար նրա ձեռքը սեղ-  
մել, նրա աչքերը վտկել:

Առաւօտից տիկին Ժերարը և Քրիստինան լը-  
սում էին այդ չարագուշակ որոտմունքները, ահ  
ու դողով նալում էին միմեանց և հալումաշ լի-  
նում: Մայրը տանջւում էր իր որդիների համար,

իսկ ջահիլ աղջիկը—իր եղբայրների և փեսացուի  
համար:

Նոքա միշտ լրաբերների կհանդէպն էին գը-  
նում և յուսաբեկ սրտով կրկին յետ դառնում:  
Ֆրանցը նէիվիլերի գիւղաքաղաքն էր վազում և  
անորոշ լուրեր էր բերում: Երեմն ասում էին,  
թէ Փրանսիացիք են լաղթուել, իսկ երեմն էլ  
թէ՝ Մակ-Մահօնը ջարդել է քառասուն հազար  
պրուսացիներ:

Յուսոյ և յուսահատութեան այդ փոփոխակա-  
նութիւնը սաստկացնում էր նրանց տանջանքը:

Երեկոյեան 9 ժամն էր: Դեռ ևս ոչ մի ճիշտ  
լուր չկար, թէև թնդանօթի որոտումն արդէն  
չորս ժամ առաջ էր գաղարել: Կար մի լաղթու-  
թիւն և մի պարտութիւն. բայց ումն էր լաղթու-  
թիւնը և ումը՝ պարտութիւնը...

Այդ շուտով յալտնի պէտք է լինէր:

Յանկարծ այն ճանապարհի վրայ, որ տա-  
նում էր դէպի հովիտը, երևացին անհամետ և  
անսանձ ձիաննը վրայ նստած տիւրկուսներ. ապա  
արագաթուիշ հեծելազօրմը վազում էր Սավերնի  
ուղղութեամբ: Նոյն կողմն է արշաւում մարդկային  
մի խառնիճազանձ խումբ:

Հրացանաձիգները, հեծելազօրքը խառնափըն-  
թոր կերպով շտապում էին, միմեանց մղելով, այն-  
պիսի մի անկարգութեամբ, որ նայողի վրայ զար-  
հուրանք էր բերում:

Դա փախուստ էր և սարսափելի փախուստ:

Զորերի միջով անցնող այս խառնաշփոթ ամբոխի կորուստը ահագին պէտք է լինէր: Կարծեսթէ անսպասելի կոտորածը գարհուրանքի մէջ էր գցել ալժմ բալոր փախստականներին: Նոքա վազում էին անխօս և աչքերը ցած գցած: Նոքա շփոթութիւնից վայր էին գցել իրանց սաղաւարտները, հրացանները, զրահները:

Հետեւակները, ձիաւորների ետեկից նստած գըրկել էին նրանց և կուչ եկել:

Դրանցից յետով գալիս էին թնդանօթակիր սալլակները աւանց թնդանօթների. Նրանց հետեւում էին ուրիշ սալլակներ, որոնց մէջ պառկեցրած էին վիրաւորները, մեռնողները և ծանր քնի մէջ ընկղմուած, յոգնած զինուորները:

Այդ տխուր գնացքը տևեց ամբողջ գիշեր:

Ամբողջ գիշերը տիկին ժերարը սպասեց, յուսալով՝ որ նրա որդիները տուն կը մտնեն. բայց իզուր. նոքա չեկան:

Նա հարցնում էր զինուորներին, որոնք անգաղար մտնում էին խմելիք կամ ուտելիք խընդրելու. բայց ոչ մինը չկարողացաւ նրան տեղեկութիւն տալ, թէ ինչ եղան հեծելազօրքի և հետեւակների Յ-րդ գունդը:

Քրիստինան չէր վստահանում հարցնել, թէ արդեօք Վիւրատեմբերգիները մասնակցել են պատերազմին, թէ ոչ: Այժմ նա մինչեւ անգամ ամաչում էր հարցնել Վիւրատին իրավունքը մարելով վայր ընկաւ:

Քանի գիշերը մօտենում էր, տիկին ժերարի երեսը աւելի և աւելի էր գունաթափւում: Նա չէր խօսում. նրա դաժան և անշարժ աչքերը կարծեսթէ նալում էին լեռների և մեծ անտառների միւս կողմը:

Ֆրանցը տեսնում էր մօր տանջանքները և ինքն էլ նոյնքան տանջուում էր:

Ֆրանսիան լաղթւած, Ալզասը յափշտակած, — նա սարսափում էր երբ յիշում էր այդ բանը:

— Մայր, ասաց նա, երբ հայրենիքը դժբաղտութեան մէջ է, բոլոր Փրանսիացիք պէտք է զէնք վերցնեն: Եթէ թոյլ տաս, ես վազը կերթամ պաշտպանելու մեր սիրելի Ալզասը իր յափշտակողներից:

— Լուիր, որդեակ, պատասխանեց մայրը վախեց կերպով.— Ո՞վ արդեօք կը պաշտպանի մեզ, եթէ դու այստեղ չլինես:

Լուսադիմին արիւնով և ցեխով թաթախուած մի զինուոր յանկարծ ներս մտաւ, և յոգնածութիւնից մարելով վայր ընկաւ:

Տիկին ժերարը մի ճիչ արձակեց: Նա ճանաչեց հարիւրապետի սպասաւորին:

Տիկինը վշտակ և աղերսալի հայեցքով վրայ ընկաւ: Նա չէր համարձակւուած նրանից հարց ու փորձ անել:

Զինուորը լուռ էր:

— Իմ որդինս, բացականչեց վերջապէս տիկին ժերարը:

Զինուորը խոնարհեցրեց աչքերը:

Մեռաւ, հարցրեց նա դողդողջուն ձայնով:

— Նա պատուիրեց ինձ իր վերջին բարեւ բերել ձեզ, պատասխանեց զինուորը:

Տիկին Ժերարը կրկին խոնարհուեց դէպի վերաւորեալը:

— Իսկ Կլօդը, արտասանեց նա դժուարութեամբ:

— Նրան ես տեսալ ընկնելիս, շշնչաց թուլացած զինուորը:

Խեղճ մայրը մնացած փետացած:

Եետոյ վսեմութեամբ լի շարժուածքով դառնալով դէպի իր վերջին տղան՝ ասաց հաստատուն ձայնով.

— Փրանց, վաղը դու կերթաս պատերազմ:

### III.

Տասն և հինգ օր անցաւ ֆրեշվիլերի հարուածից յետոյ և ֆրանսիան զգաց իր գլխի վրայ արշաւանքի հետևանքները:

Մինչև որ թագաժառանգի գունդը անցնում էր Վօգեզ լեռները, Մեց քաղաքում Շտէինիցի և ֆրեշվիլերիկ-Կարլոսի զօրքի հետ միանալու համար, Վերդերը իշնում էր դէպի Սարագբուրգ՝ նրան վշապատելու:

Ամբողջ Ալգասը ալեկոծութեան մէջ էր, որովհետև ծերերը յիշում էին առաջին արշաւանքի եղեռնագործութիւնները:

Ժողովուրդը, գլուխը կորցրած, գաղթում էր դէպի մերձակալ անտառները. խանութները փակում էին, և շարժական կայքերը բարձում սալլակների վրայ:

Գիւղացիները ցնորուածի պէս փախչում էին, քշելով իրանց առջեկց, ինչպէս Ալբահամի ժամանակը, իրանց անասուններին և աղաղակում.

— Դէպի սարը, դէպի սարը:  
Վօգեզների անանցնելի ճանապարհներին երեւում էին լաց եղող կանալք, յոգնած, ուժաթափ,

ամեն քաղաքոխում վայր ընկնող երեխաներ, դաժան գէմքերով տղամարդիկ:

Երեկոյեան հինգ ժամն էր: Արեւ գեղեցիկ ճառագալթներով նէիվելերի թարմ հովիտների վրայ լոյս և ստուեր էր սփոռում:

—Ի՞նչ խաղաղութիւն:

Կարծես թէ դաստակերար դատարկ էր:

Քրիստինալի՝ գոյնզգոյն ծաղիկներով լի ծաղկանոցում բուրում էր նարգիսի, մեխակի, երամի և ալճմօրուքի հոտ:

Մի քանի հաւեր, բազումը, արագ-արագ կըտցահարում էին զանազան փշրանքներ. մի աշխոյժ և հպարտ աքաղաղ հնչեցնում էր իր սրածայն ծուլուզուն:

Բլուրների վրայ արածում էին շիկագոյն կովեր. դաշտը, իր ուռենիներով և սօսիի ծառերով, փայլում էր ոսկենման և պարզ գոյնով:

Ալդպիսի ուրախ և խաղաղ տեսարանի առջև ինչպէս կարելի էր երեակացել, թէ մի քանի մզոն հեռու տեղի են ունեցել զարհուրելի պատերազմ, սարսափելի տանջանքներ . . .

Ի՞նչպէս երեակալել, որ ալդպիսի խաղաղ կտուրի տակ մարդու սիրտը կարող է սարսափելի կերպով տանջուել:

Փրանցը գնացել էր: Նա մտել էր կամաւոր հրացանաձիգների գնդի մէջ:

Տիկին ֆերարը ուղարկել էր Քրիստինալին մի բարեկամի մօտ, որ բնակվում էր Վօգեզների զա-

ռիվայրում գտնւած գիւղերից մէկում: Ինքն էլ միայնակ էր մնացել դաստակերտում:

Ասում էին թշնամին թալանել է նէիվելեր գիւղաքաղաքը և մօտենում է:

Տիկին ֆերարը շատ շփոթուած էր: Խօսում էին կամաւոր հրացանաձիգների և պրուսացիների մէջ, մօտակայ անտառներում, անցեալ գիշեր պատահած պատերազմի մասին:

Ժամանակ առ ժամանակ նա մօտենում էր դրան շէմքին, ականջ էր զնում և կարծես իր հայեացքով ինչ որ բան էր հարցնում ծառերով պսակուած լեռնագագաթներին և այն ճանապարհին, որ տանում էր գէպի գիւղաքաղաքը:

Յանկալծ նա լսեց մի ինչ որ խուլ ձայն: Շուտով նա տեսաւ սրածայր սաղաւարտներ, որոնք փայլեցին ճանապարհը շրջապատսղ ծառերի միջից:

Նոքա գալիս էին:

Տիկին ֆերարը սպասում էր նոցա անվրդով:

Եկողը հեծալազօրքի գունդն էր:

Նախ երկու զինուոր գիմեցին դէպի բնակարանը: Նրանց ձիաների սանձերը արձակ էին, փետուրները ծածանում էին, ոուրերը մերկ, աչքերը կարմրած, սարսափելի:

Տիկին ֆերարը մնաց ոտքի վրայ կանգնած, անշարժ:

—Ի՞նչ էք կամենում, հարցրեց նա ձիուց յած իջնող օֆիցերին:

—Ի՞նչ եմ կամենում . . . պատասխանեց նա

գեղեցիկ Փրանսերէնով. Ես կամենում եմ տեղաւորել այստեղ իմ գունդը: Մենք քաղցած ենք, մեզ լաւ ճաշ բերէք. շուտ:

— Ես ձեզ ոչինչ չեմ տալ, պատասխանեց: Հպարտութեամբ ազնիւ կինը: Դուք տէր էք, վերցրէք:

— Օհո, եթէ դուք մեզ հետ այդ կերպ կը խօսէք, լաւ չի լինիւ. զգոյշ կացէք: Մեզ ասացին, որ այստեղ գտնւում են կամաւոր հրացանաձիգներ:

— Ոչ. չկան. փնտուցէք:

— Դուք անշուշտ աեսած կը լինէք նոցա մօտակալ անտառներում:

— Ես չեմ տեսել:

Նոլն վայրկեանին դաստակերտը շըջապատող լեռնագագաթներից լսուեց հրացանների ձայն:

— Դուք խաբում էիք, բացականչեց աստիճանաւորը իր ատրճանակի փողը մեկնելով դէպի տիկին ժերարի կուրծքը:

Նրա դէմքը խօֆոռուեցաւ:

— Ո՞րքան են, գոչեց աստիճանաւորը. ասացէք:

Նա չպատասխանեց:

Բայց հեծելազօրքը արդէն մօտենում էր և շըջապատում անտառները:

Օրը մթնում էր: Ամենալն կողմից լսում էր թնդանօթի որոտ:

Տիկին ժերարը սարսափելով էր լսում այդ որոտը: Թնդանօթի իւրաքանչիւր թնդիւնը արձագանք էր գտնում նրա սրտի մէջ:

Յանկարծ նա նկատեց մաբդկանց ստուերներ, որոնք անցնում էին գալուկ բոլորի միջով և զգուշութեամբ մօտենում:

— Մայր, ասաց մի ձայն: — Մենք ենք:

— Մտէք, շուտ, պատասխանեց նա:

Քառասուն տղամարդ մտան դաստակերտը, մէկը միւսի լետեկից:

Մի վայրկեանում դիմադրութիւնը պատրաստէր: Նոքա ժողովեցին սայլեր, երկրագործական գործիքներ, մահճակալներ, կահկարասիք և շինեցին մի բարձր պատնէշ: Դռների և փեղկերի մէջ ծակեր բաց արին:

Եւ սպասեցին:

Լուսինը դանդաղ կերպով բարձրանալով լեռների միջով, հրեղէն գնդի նման լուսաւորեց հովիտը:

Հեծելազօրքը, որ յըիւ էր եկել կամաւորների հրացանների ձայնից, կրկին խմբուեց և շտապով վերագառնում էր դէպի դաստակերտը: \*

Սկսուեց մի սարսափելի, շատ սարսափելի լարձակումն:

Պատնէշը ոչնչացրին: Ծակուած գոները և փեղկերը թոյլ էին դիմադրութեան համար: Դուցէ շուտով դաստակերտը աւերվէր և կամաւոր հրացանձիգները գերի պիտի ընկնէին կատաղի թշնամու ձեռքը:

Տիկին ժերարը ներկայ էր և անվեհերութեամբ սպասում էր այդ կուփի վախճանին:

Այս կոփւը անօգուտ գանելով մի քանիսը ա-

սաջարկեցին անձատուր լինել:

Սնձնատուր լինել, գոչեց տիկինը, — Երբէք:  
Ուրեմն դուք չէք ճանաչում նրանց: Նրանք ոչ  
պատիւ ունին, ոչ խիղճ, ձեզ կը սպանեն: Ոչ, ոչ,  
փախէք, այն կողմը փախէք:

Ապա ետևից մի անցք բացանելով, նա վերցրեց  
խոտի խուրձեր, նոցանից մի խարոյիկ շինեց և վառեց:  
— — Փախէք, կրկնեց նա:

Եւ նա իր դաստակերտը կրակ տուաւ, այն  
դաստակերտը, ուր գտնվում էին, նրա քսան տար-  
ուալ աշխատանքի և խնալողութեան պտուղները,  
նրա բոլոր լիշտակները:

Հրդեհը կանգնեցրեց թշնամուն:

Բայց կամաւոր հրացանաձիգները, որոնք այդ-  
պիսի հերոսութեան շնորհով փրկուեցին, մի քանի  
օրից յետոյ գերի ընկան հեծելազօրքի ձեռքը:

Նրանց երկար դիմադրութիւնից զայրանալով,  
պրուսացիները գործ դրեցին մի անգութ վրէժ-  
խընդրութիւն . . .

Երբ նրանք հեռացան նէիվելերից, տիկին ծե-  
րարը, որ պատսպարուած էր Քրիստինալի մօտ, նրա  
հետ միասին վերադարձաւ դաստակերտը:

Երբ նրանք մօտենում էին՝

— Նալիր, ասաց Քրիստինան սեղմվելով մօր  
կրծքին, — այն ինչ է ճանապարհի մօտ: Կարծես թէ  
զինուորներ են: Արդեօք պրուսացիք են, թէ Փրան-  
սիացիք: Ի՞նչմէս անշարժութիւն: Եւ ինչ զարմա-  
նալի բան: Նրանց ոտները գետնին չեն կպչում:

Տիկին ծերարը դողդողիւն սրտով, վախից չռած  
աջքերով, նայում էր առանց պատասխանելու:

Ճշմարիտ ալդ ինչ կը նշանակէ:

Փոքր ինչ մօտենելով, նրանք ճանաչեցին կա-  
մաւոր հրացանաձիգների նշանազգեստները:

Նրանք շտապեցին:

Զարհուրանք . . . Այդ կախված դիակներ  
էին: Նրանց կապտագոյն, արիւնալից երեսները  
զարհուրելի կերպով ալլանդակված էին:

Վայրենիները նախ քան կը կախէին կամաւոր  
հրացանաձիգներին, կտրտել էին նրանց քթերը և  
ականչները, և դրել ճանապարհի ափին, որպէս  
օրինակ անցորդների համար \*):

Այդ սարսափելի տեսարանի առջեւ, տիկին ծե-  
րարը մի խօսք անդամ չը կարողացաւ արտասանել:  
Զարհուրելի վշտերից նրա կոկորդը սեղմվում էր: Նա  
խելագարի նման վաշում էր մէկ դիակից դէպի միւսը,  
աշխատելով ճանաչել ալլանդակ դիակների մէջ իր  
որդուն, իր սիրելի ֆրանցին:

Նա վերջինն էր անբախտ կախվածների շարքում:

Այն ժամանակ կատաղաբար բռնելով իր տղ-  
ջակալ ձեռքը՝ տիկին ծերարը ասաց.

— Երբէք, լսում ես, Քրիստինա, երբէք չես  
ամուսնանալ այս բարբարոսներից մէկի հետ: Ես  
աւելի լաւ կը համարեմ քեզ մեռած տեսանունը  
թէ ամուսնացած մէկ գերմանացու հետ: Առաջնա  
ամուսնունը մէկ գերմանացու հետ:

\*) Այդ հրէշաւոր դէպի նշանակած պատահել է Արգամանական Անդամության կողմէ:



Ուրեմն նա պիտի թողնէր իր դաստակերտը:  
Նա պիտի ծախէր այն հողը, որ մշակել էր քսան  
տարի շարունակ, այն ծառերը, որ տնկել էր, այն  
դաշտերը, որ պատրաստել էր այնքան դժուարու-  
թեամբ: Նրա կարծիքով, այդ գեղեցիկ հովտը  
զարհուրելի էր այն օրուանից, երբ պրուսական հող  
էր դարձել: Նա չէր կարող այնտեղ բնակվել, այն-  
տեղ ապրել, մանաւանդ որ նա լի էր իր զաւակ-  
ների լիշտակներով, որոնցից չէր մնացել և ոչ մինը:

1872 թւականի հոկտեմբեր ամսվայ առաջին  
օրերն էին:

Այն դաստակերտը, որ երբեմն այնպէս հաճոյա-  
կան էր, որի բարձր ծառերի տակ ծածկված էր  
խորհրդաւոր բաղդաւորութիւն, մնացել էր այնպէս,  
ինչպէս էր պատերազմի միւս օրը: Նա աւերակնե-  
րի և անկարգութիւնների մի տեսարան էր միայն  
ներկայացնում:

Հալրենասէր տիկինը, իր հեռանալը աչքի  
առաջ ունենալով, չուցեց ոչինչ նորոգել:

Քանդված կտուրը թեքված էր: Կիսաւեր պա-  
տերի միջից երևում էր տան ներսը:

Հաւանոցը դատարկ էր: Ագուալը ժամանակ  
առ ժամանակ արձակում էր այդ խորին լրութեան  
մէջ իր տիսուր աղաղակը:

Ծաղկանոցը աւերված էր:

Տիկին ծերարը մի ծեր սպասաւորի օգնութեամբ  
գնալու պատրաստութիւններ էր տեսնում:

Նա հաւաքել էր ամբարի մէջ այն կարասիքը

### III

Համարեա երկու տարի էր անցել պատերազմից:  
Դազանալին, կատաղի յաղթութեան շնորհով.  
Հոգով Փրանսիական Ալզասը դարձաւ գերմանական  
երկիր:

Գարշելի յաղթողը ի չար գործ դրեց իր ուժը,  
ստիպելով իր նոր հպատակներին ընտրութիւն անել՝  
կամ մնալ Փրանսիացի և հեռանալ Ալզասից, կամ  
դառնալ գերմանացի և մնալ այնտեղ:

Տիկին ծերարը աւելի Փրանսուհի է, քան Ալ-  
զասուհի: Երբէք նա պրուսացի չի լինի. Երբէք  
նա այդ ատելի անունը չի կրել:

Հարկաւ, ասում էր նա, Ալզասում պիտի  
մնան մի քանի Փրանսիացիք, որ Ալզասը լինի  
Պրուսիայի կողքին կաված մի աւելորդ մարմին, որ-  
պէս զի վը էժինդրութեան օրը բոլոր ալզասցիք  
ոտքի կանգնեն ճնշողի դէմ: Բայց ես չեմ կարող  
մնալ, որովհետեւ անկարող կը լինեմ ատելութիւնս  
թագցնել:

և իրեղէնները, որոնք հրդեհից ազտտված էին, որովհետև դաստակերտի միայն կէսն էր աւերված:

Ի՞նչպիսի փոփոխութիւն էր նկատվում այն դէմքի վրա, որ առաջ այնպէս պարզ և գեղատեսիլ էր: Նրա հայեացքը մուայլ էր և վալրենի: Երեսում էր, որ նա պահպանել է անցած զարհուրանքի արտայալութիւնը:

Առաջվայ պարզ և հանդարտ ճակատի վրա նկատելի էր մի խորին, վշտակիր կնձիռ: Բերանի երկու կողմը կազմված էր դառնութեամբ և տանջանքով լի մի գիծ:

Այնուամենայնիւ քաջ կինը ալնքան վշտերից էլ ընկճված չէր: Ընդհակառակը, կարծես թէ նրա մէջքը աւելի ուղիղ ձև էր ստացել և նա իր գլուխը այնպէս էր բռնում, որ ցոյց էր տալիս այդ կնոջ անվեհեր բնաւորութիւնը:

Երեկոյ էր: Երկինքը մոխրագոյն: Անձրել անդադար գալիս էր: Քամին սաստիկ վչում էր:

Դուռը ծեծում էին:

Ով կարող էր, արդեօք, գալ այդ աւերված դաստակերտը ալդպէս ուշ, և այդպէս վատ եղանակին:

— Բացէք, Յովսէփ, ասաց տիկին Ժերարը:

Յովսէփը բացեց:

Մի շէկ մարդ երեւաց շէմքի վրա:

— Տիկին Ժերար, բացականչեց նա:

Եւ նա մօտեցաւ, ձեռքերը մեկնած, որ նրան համբուրէ:

Բայց տիկին Ժերարը իր հպարտ, սքանչելի

հայեացքով կանգնեցրեց նրան իր տեղը:

— Ի՞նչու էք եկել, հարցրեց նա:

— Ես եկել եմ պահանջելու, որ կատարէք ձեր խոստմունքը:

— Ի՞նչ խոստմունք,

— Զէք ճանաչում Կարլ Ֆորլիշին:

— Ես գիտեմ ձեր անունը, բայց ձեզ չեմ ճանաչում: Դուք գերմանացի էք, և երբէք, լսում էք, երբէք ես ձեռք չեմ տալ մի գերմանացու:

— Բայց Քրիստինան ինձ կը ճանաչի: Քրիստինան շարունակում է ինձ սիրել, ես հաւատացած եմ: Քրիստինան:

— Դուք կամենում էք նրան տեսնել:

— Ո՛հ, այս, շուտով: Ես սիրում եմ նրան. Ես չեմ դադարել նրան սիրելուց, միշտ մտածել եմ նրա մասին, թէւ նա իմ նամակներիս պատասխան չէ տուել: Նայեցէք, իմ կրծքին կրում եմ նրա թանգագին պատկերը և ահա այն «լիշտակի ծաղիկը», որ ինձ տուեց իմ գնալու օրը:

— Նատ լաւ: Դուք նրան կը տեսնէք: Եկէք:

Նա բացեց ամբարի փոքրիկ դուռը:

Դա մի մթին տեղ էր, ուր Կարլ Ֆորլիշը նկատեց երեք մետաղեայ երկալն սնդուկներ: Նոցանից մէկի վրա դրած էր սպիտակ, թառամած վարդերից շինած մի պսակ:

Ալդ երեք դադաղների առջեր մի լապտեր էր վառվում:

— Բայց Քրիստինան, ես չեմ տեսնում Քրիստի-

նախն, վախեցած և խեղդած ձայնով բացականչեց երիտասարդը:

— Նա այնտեղ է, ասաց տիկին ֆերարը, ցոյց տալով այն դագաղը, որի վրա դրած էր պսակը: Նա ձեզ սիրում էր, բայց իր հայրենիքը գերադասեց ձեզանից: Նա դրանից էլ մեռաւ: Իսկ ես բաղդաւոր եմ, որ նրան տեսնում եմ մեռած, քան թէ մի գերմանացու տուած: Հասկանում էք, արդեօք, Կարլ Ֆօրլիշ:

Կարլը հեկեկալով ծունկ չոքեց իր հարսնացուի դագաղի առջև:

— Իմ չորս որդիքս մեռան, — խուլ և դողդողջիւն ձայնով շարունակեց տիկինը: Գերմանացիք սպանեցին նրանց: Բայց նրանք չը բաւականացան՝ որ որդոցս խլեցին, նրանք յափշտակեցին և իմ հայրենիքս, այն հողը, որտեղ թաղված են նախնիքներս, որտեղ ես ծնվել եմ, որտեղ ես ապրել եմ և որտեղ յոյս ունէի մեռնելու: Ոչ միայն ես չէի կամենում, որ Քրիստինան ամուսնայ գերմանացու հետ, այլ և չեմ կամենում, որ նրա սոկորները հանգստանան պրուսական հողի վրա: Այս երկորդ դագաղը պարունակում է իմ խեղճ ֆրանցի մարմինը: այս միւսը՝ իմ ամուսնու ոսկորները: Ես պիտի տանեմ ինձ հետ այս սուրբ մասունքները <sup>\*)</sup>:

— Իսկ ինչ որ վերաբերում է իմ մնացած երկու գաւակներին, որոնց մարմինը ես չը կարողացայ գտնել, թող նրանց արիւնը սրսկի նրանց սպանողների գլուխին: Իմ Ալզա սեան հայրենիքում մնացած նրանց ստուերներից թող դուրս գայ մի վրիժահան:

Կարլը վեր կացաւ: Լսելով տիկին ֆերարին, նա շատ յուգվեց:

— Դուք իրաւունք ունէք ատել Պրուսիան, ասաց նա, — ես էլ ձեզ պէս ատում եմ այդ նոյն Պրուսիան: Ես ատում եմ նրան՝ նրա հարստահարութեան, նրա յափշտակասիրութեան, նրա չարագործութեան համար: Միթէ մենք, վիւրտեմբերգիներս, զոհված ժողովուրդ չենք: Բոլոր գերմանացիք, տիկին, պրուսացիներ չեն: Գերմանիայում ահագին կուտակցութիւններ կան, որոնք պատրաստվում են Պրուսիայի ատելի լուծից ազատվելու: Եւ երբ արդարագտառութեան օրը կը մօտենալ, այն սարսափելի օրը, երբ Ալզասը կապստամբվի, ես, այո՛, ես ես կը լինեմ այն վրիժահանների մէջ, որոնց դուք փափագում էք: Երդում եմ Քրիստինայի դիակի վրա: Ալժմ թոյլ կը տաք ինձ, ձեզ մայր կանչել:

Լսելով Կարլի ալդ խօսքերը, տիկին ֆերարը զգաց մի վայրկեան իր ատելութեան նուազումը: Նրա դէմքը փոխվեց և նրա մեղմացած աչքերից սկսեցին արտասուքներ թափվել:

Այդ առաջին արտասուքներն էին, որ նա թափեց իր որդիների մահից և հայրենիքի դժբախտութիւնից յետոյ:

\*) Բազմաթիւ են այդպիսի օրինակներ, Շատ տեղերում գաղթականները հանել են իրենց մեռելներին՝ իրանց հնատ տանելու համար,

Կարլը կարծեց, որ յաղթել է: Նա կրկին ձեռք  
մեկնեց նրան:

Բայց տիկին ժերարը չընդունեց:

— Ի սէր Աստուծոյ, աղաջում էր Կարլը,  
տուէք ինձ ձեր ձեռքը որ իմ վիշտը այնքան դառն  
չը լինի, որ իմ Քրիստինակի կորստեան վիշտը մեղ-  
մանալ:

— Այն օրը, երբ Ալզասը վերադարձրած կը լինի  
ֆրանսիային, պատասխանեց հայրենասէր կինը,  
— այն օրը միայն ես կարող եմ ձեր ձեռքը սեղ-  
մել, այն օրը միայն ֆրանսիացիք կարող են գեր-  
մանացոց հետ հաշտվել:



Վ Ե Ր Զ



ՀՀ Ազգային գրադարան



**NL0585457**

